ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 հունվարի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

6
(3037)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՄԻՍՆԵՐ ԱՌԱՋ ՔԱՐՈԶԱՐՇԱՎ Է ՍԿՍԵԼ

Գյումրու համայնքապետի ԺՊ նշանակված Սարիկ Մինասյանը, որը համայնքապետի՝ մարտին կայանալիք ընտրությունների ժամանակ գլխավորելու է ՔՊ ցուցակը, դեռ պաշտոնական քարոզարշավը չմեկնարկած՝ արդեն սկսել է փաստացի քարոզարշավը:

Նրա ֆեյսբուքյան պաշտոնական էջը ողողված է ինքնագովազդային հրապարակումներով:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ նորաթուխ ՔՊ-ական համայնքապետի թեկնածուն մեկ նվերներ է բաժանում քաղաքացիներին, մեկ հանդիպումներ ունենում բնակիչների, երիտասարդների եւ տարբեր ոլորտների ներկայացուցիչների հետ ու ամենօրյա ռեժիմով գովազդում իր գործունեությունը:

Այսպիսով, ակնհայտ է, որ մարտին կայանալիք համայնքապետի ընտրություններն անհավասար պայմաններով են ընթանալու:

Մինչ ՔՊ-ի թեկնածուն ընտրություններից ամիսներ առաջ սկսել է քարոզարշավը ու հանրությանը ցույց է տալիս աշխատանքը, մյուս թեկնածուները նման հնարավորություն չունեն:

ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանում է.

«1. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու եւ ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը եւ ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Այդ ժամանակահատվածում քարոզչությունը ստորեւ անվանվում է նախընտրական քարոզչություն»:

Այս դեպքում, սակայն, թե՛ հավասարության, թե՛ ժամկետի հետ կապված պահանջները փաստացի խախտված են:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ԿԸՀ՝ պարզելու՝

- ինչպե՞ս են վերաբերվում պետական այս հաստատությունում օրինազանցության փաստացի դեպքին:
- Ինչո՞ւ չեն արձանագրվել այս խախտումները, ինչո՞ւ ՔՊ հիմնադիրներից Վահագն Հովակիմյանի գլխավորած ԿԸՀ-ն հայտարարությամբ հանդես չի գալիս սրա վերաբերյալ:

ԿԸՀ-ից գրավոր հարցում պահանջեցին, որը ուղարկել ենք եւ պատասխանը ստանալուն պես՝ կհրապարակենք:



Արցախը հանձնելուց հետո էլ այն իշխանության համար ոսկոր է կոկորդին: Իշխանությունները պատերազմի վախ ունեն սեփական լեզվի սայթաքումների պատճառով: Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը կարծում է, որ «Արցախ» բառն ասելու համար Ադրբեջանը կարող է նոր պատերազմ հրահրել: Այս մասին Սիմոնյանը երեկ է հայտարարել լրագրողների հետ ճեպազրույցում: «Երբ ես ասում եմ Ղարաբաղ, դուք ասում եք՝ «չեք ասում Արցախ»: Այդ նույնը հակառակ պատկերով վերցրեք, որ Ադրբեջանում ասում են՝ «Արեւմտյան Ադրբեջան», մենք ասում ենք՝ «դա մեր նկատմամբ տարածքային պահանջ է»: Սրա մասին է խոսքը, դա է մեծ խնդիրը, որը ստիպում է բառապաշարի առումով ճիշտ ձեւակերպումներ տալ, որպեսզի չհրահրվի նոր պատերազմ, նոր հարձակում»,- լրագրողների հետ զրույցում ասաց նա: Սիմոնյանը նշել է, որ Հայաստանը որեւիցե պահանջ չունի Ադրբեջանի նկատմամբ. սրան զուգահեռ Ադրբեջանի տարածքային պահանջները Հայաստանի նկատմամբ չեն դադարում: Եվ ԱԺ նախագահը սա հայտարարում է այն դեպքում, երբ Հայաստանից ադրբեջանական կողմը ապօրինի զավթել է 200 կմ^2 տարածք: «Վարչապետն ասաց, որ Հայաստանն ավարտվում է Արմավիրի մարզով ու Տավուշով: Սա է Հայաստանը, այն քարտեզն է, որ փակցրել եմ Ազգային ժողովում. իզուր չեմ փակցրել»,- նշեց ԱԺ նախագահը: Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարությունն ունի որոշում, որ ՀՀ օկուպացված շուրջ 200 կմ^2 տարածքի հարցը, որի մաս է կազմում Ջերմուկի մերձակա բարձունքը, պետք է խաղաղ բանակցությունների միջոցով լուծվի: ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանն էլ վերջին ասուլիսի ժամանակ հավելել էր, որ այս հարցը հասցեագրված է սահմանազատման-սահմանագծման եւ սահմանների անվտանգության հանձնաժողովին: Ալեն Սիմոնյանին հարկ է հիշեցնել, որ օրեր առաջ, երբ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարում էր, թե անկախ հայկական պետությունը, ըստ էության ֆաշիստական պետություն է, իրենք հարեւան են այսպիսի ֆաշիստական պետության հետ, որ ֆաշիզմի վտանգը չի վերանում եւ խոսում էր դրա վերացման անհրաժեշտության մասին, կարծես թե իշխանական որեւէ պատգամավոր այդ ժամանակ «Արցախ» բառը չէր հնչեցրել:

Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը, փաստորեն, չէր հրավիրվել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի՝ Վաշինգտոնում հունվարի 20-ին տեղի ունեցած երդմնակալության պաշտոնական արարողությանը: Փոխարենը սոցապ նախարար Նարեկ Մկրտչյանն է ԱՄՆ-ում Հայաստանի դեսպան Լիլիթ Մակունցի հետ մասնակցել, լուսանկարներ հրապարակել՝ նշելով, թե Թրամփի երդմնակալությանը նվիրված արարողությանն է մասնակցել՝ իր ֆեյսբուքյան էջը ողողելով լուսանկարներով: Փաստորեն, վարչապետ Փաշինյանը, արտգործնախարար Արարատ Միրզոյանը, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը չեն հրավիրվում պաշտոնական արարողությանը, փոխարենը Հայաստանը մասնակցում է սոցապ նախարարի մակարդակով: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել նախարար Նարեկ Մկրտչյանի խոսնակի հետ՝ պարզելու, թե ի պաշտոնե որպես ով է Նարեկ Մկրտչյանը մասնակցել միջոցառմանը, ինչ հանդիպումներ է ունեցել ԱՄՆ-ում, ինչ միջոցներով է մեկնել, սակայն խոսնակն անհասանելի էր: ***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***



Իրավապահ մարմինները, ի դեմս քննչական կոմիտեի, լայն թափով գործընթաց են սկսել՝ ուղղված իշխանության դեմ հրապարակային արտահայտվողների: «Ժողովուրդ» օրաթերթը, ըստ քննչական կոմիտեի աղբյուրների փոխանցած տեղեկությունների, պարզեց, որ սցենարիստ, գրող Վահրամ Սահակյանին առաջիկայում քննչական կոմիտե են հրավիրելու, եւ մեղադրանքը վերջինիս նկատմամբ անխուսափելի է լինելու: Նշենք՝ Սահակյանի նկատմամբ քրեական վարույթ է նախաձեռնվել հունվարի 18-ին ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 3-ի կետի հատկանիշներով (ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը, որն իրականացվել է հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների, զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ): ***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***

ԶՐՈՒՅՑ

«ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՆԵՐՍՈՒՄ ԿԱՆ ԼԱՏԵՆՏ ՆԻԿՈԼԱԿԱՆՆԵՐ», ԴԱՆԻԵԼՅԱՆ

Քաղաքական դաշտը շարունակում է լարված մնալ ինչպես իշխանական, այնպես էլ ընդդիմադիր դաշտում:

ՀՀԿ ԵԿ ղեկավար Հենրիխ Դանիելյանի խոսքով՝ ընդդիմադիր դաշտում կան «լատենտ նիկոլականներ»:

Թե ինչից է սկիզբ առել ընդդիմադիր դաշտում կոնֆլիկտը, ով է մեղավորը եւ ինչն է խանգարում համախմբվել 1 գաղափարի շուրջ, այս եւ այլ հարցերի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ՀՀԿ ԵԿ ղեկավար Հենրիխ Դանիելյանի հետ:

-Պարոն Դանիելյան, ինչի՞ց սկիզբ առավ երկու ընդդիմադիր կողմերի՝ միմյանց չհասկանալու գործընթացը:

-Մեր հայրենակիցներին պետք է բացահայտենք իրականությունը. չկա երկու ընդդիմադիր ուժերի միջեւ ինչ-որ հակասություն, չկա մեր եւ որեւէ այլ ընդդիմադիր ուժի միջեւ առկա կոնֆլիկտային իրավիճակ: Մենք ունենք հստակ գիծ, որը 2018 թվականից սկսած՝ որպես ընդդիմություն, տանում ենք: 2018 թվականից առաջ կար այդ գիծը՝ որպես իշխանություն: Այն հայկական ապագայի եւ Հայաստանի Հանրապետության ու Արցախի շահն առաջնային դասելով քայլեր իրականացնելն է: Ովքեր այս սկզբունքը չեն կիսում, փորձում են Նիկոլ Փաշինյանի նարատիվները բերել քաղաքական դաշտ, փորձում են ցեխ նետել մեզ վրա՝ չմասնակցելով որեւէ քաղաքական գործընթացի, բայց ցույց տալով, թե մասնակցում են, մեր պատասխաններն այդ սեգմենտին են վերաբերում: Սեգմենտ, որ հասարակության շրջանակում հայտնի են որպես գումարի դիմաց քայլեր ձեռնարկողներ, այլ ոչ թե հայրենասիրական մղումով առաջնորդվող գործիչներ: Ամենայն անկեղծությամբ կարող ենք փաստել, որ մեր եւ ընդդիմադիր մյուս շարժումների միջեւ կա համախմբվածություն: Մենք այսօր խոսում ենք ինչ-որ մարդկանց մասին, որոնք ո՛չ քաղաքական, ո՛չ անձնական, ո՛չ էլ որպես անհատ արժանի չեն այդ խոսակցություններին: «Հայաստանի հանրապետական» կուսակցությունը ունի որդեգրած գիծ, եւ դա ազգային ճանապարհն է. սա ժողովուրդը պետք է հասկանա:

-Այնուամենայնիվ, կարծես թե, կոնֆլիկտը կա, այս կոնֆլիկտից հետո կշարունակե՞ք կրկին Նիկոլ Փաշինյանին իշխանությունից հեռացնելու գաղափարի շուրջ հավաքվել:

-Մենք միշտ եղել ենք առաջամարտիկ յուրաքանչյուր պայքարում՝ անկախ նրանից, թե ով է իրականացնողը, բայց մենք երբեք չենք մասնակցել հակապետական գործողությունների: Օրինակ՝ սորոսական անձանց կողմից ծրագրված գործընթացների, կամ անձնական շահը սպասարկող քայլերի: Մենք մասնակցել ենք եւ կմասնակցենք ՀՀ ինքնիշխանությունն ապահովող եւ այդ գործընթացները իրականացնող ուժերի, ազգային գաղափարախոսությանը դավանող կառույցների գործընթացներին:

«Հայաստանի հանրապետական» կուսակցությունը, երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ, մասնակցում է եւ մասնակցելու է մեր ռազմագերիների վերադարձի, Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների վերադարձի, նրանց ոտնահարված իրավունքների վերականգնման առնչությամբ կատարվող աշխատանքներին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ՍԵՐԳԵՅ ԼԱՎՐՈՎԸ ԿԱՅՑԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը կայցելի Երեւան: Այս մասին նա հայտարարեց Մոսկվայում իր գործընկեր, ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի հետ կայացած մամուլի ասուլիսում:

Նախարարն ասաց, որ մտադիր է օգտվել Միրզոյանի հրավերից եւ այցելել Երեւան:

«Ես շոյված կլինեմ եւ կսպասեմ Ձեզ Երեւանում»,- նշել է Միրզոյանը:

Հայաստանի ղեկավարությունն էլ հրավիրվել է Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 80-ամյակին նվիրված շքերթին, որը տեղի կունենա մայիսի 9-ին Մոսկվայում:

«Ուրախ կլինենք տեսնել Հայաստանի ղեկավարությանը Մոսկվայում մայիսյան տոնակատարություններին»,- երեկ՝ հունվարի 21-ին, նախարար Արարատ Միրզոյանի հետ համատեղ ասուլիսում ասաց Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը:

Ռուս նախարարն ընդգծել է պատմական ճշմարտության եւ ընդհանուր պատմության հիշողության կարեւորությունը:

ՀԱՍԱՆՈՎԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ ԱՆՑԿԱՑՐԵԼ Է ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Զաքիր Հասանովը Ստեփանակերտում խորհրդակցություն է անցկացրել, որին արժե ուշադրություն դարձնել՝ չմոռանալով, որ հիմա թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժություններ են անցկացվում: Այս մասին գրել է ադրբեջանագետ Տաթեւիկ Հայրապետյանը:

«Ադրբեջանի ՊՆ-ն հաղորդագրություն է տարածել, ըստ որի՝ օկուպացված Ստեփանակերտում Ադրբեջանի ՊՆ ղեկավար Հասանովը ցամաքային ուժերի օպերատիվ խորհրդակցություն է անցկացրել:

Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ «Հանդիպմանը վերլուծվել է ադրբեջանա-հայկական պայմանական սահմանին առկա օպերատիվ իրավիճակը, զորամասերի մարտական պատրաստության աշխատանքները եւ զինվորական կարգապահության վիճակը:

Հասանովը համապատասխան հանձնարարականներ է տվել զորամասերի ծառայողական եւ մարտական գործունեությունը բարելավելու, զգոնությունը բարձրացնելու, հանձնարարված խնդիրների ճշգրիտ եւ ժամանակին կատարումն ապահովելու ուղղությամբ...»:

Կարծում եմ՝ այս խորհրդակցությանը արժե ուշադրություն դարձնել, չմոռանալով նաեւ, որ այս օրերին Կարսում թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժություններ են անցկացվում»,- գրել է նա:

ԼՈՒՐԵՐ

Ա. ՄԻՐԶՈՅԱՆԻ ԵՎ ԼԱՎՐՈՎԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հայաստանը պատրաստ է ապաշրջափակել բոլոր հաղորդակցությունները Հարավային Կովկասում. այս մասին Մոսկվայում ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հետ հանդիպմանն ասել է ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը:

«Ուրախ եմ հաստատել Հայաստանի տեսլականը՝ ապաշրջափակելու բոլոր տնտեսական եւ տրանսպորտային հաղորդակցությունները, ինչը նախատեսված է «Խաղաղության խաչմերուկ» նախագծի շրջանակում»,- նշել է նա:

Հայաստանի կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը ենթադրում է Ադրբեջանի հետ տրանսպորտային կապերի ապաշրջափակում եւ դրանց ինտեգրումն ամբողջ տարածաշրջանի ենթակառուցվածքներին:

ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Դոնալդ Թրամփը դարձավ ԱՄՆ 47-րդ նախագահը: Երդմնակալությունը տեղի ունեցավ 2025 թվականի հունվարի 20-ին Վաշինգտոնում՝ Կապիտոլիումի շենքում:

ԱՄՆ 45-րդ նախագահը երկրորդ անգամ ստանձնեց երկրի ղեկավարի պաշտոնը՝ դառնալով Միացյալ Նահանգների 47-րդ նախագահը: Երդմնակալության արարողության ժամանակ Դոնալդ Թրամփը երդվեց՝ օգտագործելով Աստվածաշունչը:

Երդմնակալությունից հետո իր ելույթում Թրամփը հայտարարեց, որ «Ամերիկայի ոսկե դարաշրջանը սկսվում է հենց այժմ» եւ խոստացավ «Ամերիկան դնել առաջին տեղում»:

Դոնալդ Թրամփը, որպես ԱՄՆ նախագահ, ստորագրել է առաջին հրամանագրերը:

Այսպիսով՝ անհապաղ վերացնել կառավարության բոլոր գրաքննությունները՝ խոսքի ազատությունը Ամերիկա վերադարձնելու համար:

ԱՄՆ-ում ճանաչել միայն երկու սեռ՝ արական եւ իգական: ԱՄՆ-ն կվերանվանի Մեքսիկական ծոցը Ամերիկայի ծոց, իսկ Դենալի լեռը՝ Մակքինլի: Ամերիկան կվերադարձնի Պանամայի ջրանցքը: Նա նաեւ խոստացել է լինել խաղաղարար եւ միավորող եւ խոստացել է ավարտել բոլոր պատերազմները:

Թրամփը ստորագրել է հրաման՝ անօրինական ներգաղթյալների երեխաներին ծննդյան իրավունքից զրկելու մասին:

Այս հրամանը հակասում է ԱՄՆ Սահմանադրության 14-րդ փոփոխությանը եւ, հավանաբար, կվիճարկվի ԱՄՆ Գերագույն դատարանում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ԲՈԼՈՐՍ ԷԼ ՍԽԱԼՎՈՒՄ ԵՆՔ». ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանն երեկ լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ Արցախ անվանումն օգտագործեց, ապա մի քանի անգամ ուղղեց իր «սխալը»՝ չորս անգամ կրկնելով «Ղարաբաղ» բառը:

«Արցախը (ապա նշեց՝ Ղարաբաղը, խմբ.) երբեւիցե Հայաստանի կողմից չի ճանաչվել որպես անկախ պետություն որեւիցե իշխանության ժամանակ, եւ Հայաստանի Հանրապետությունն իր որեւէ հարեւանի նկատմամբ տարածքային պահանջ չունի եւ չի ունեցել»:

Լրագրողների հակադարձումներին, թե ինչու Արցախը փոխեց Ղարաբաղ ասաց, ԱԺ նախագահը նշեց, որ կարծում է՝ ճիշտը Ղարաբաղ ձեւակերպումն է:

Հարցին էլ՝ ինչո՞ւ է ասել, թե Աղդամն իր հայրենիքն է, Սիմոնյանն ասաց. «Բոլորս էլ սխալվում ենք»:

ՋԵԼԵՆՍԿԻՆ ՊԱՏՐԱՍՏ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐՔԻ՞

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը երեքշաբթի օրը հայտարարել է, որ Վլադիմիր Զելենսկին պատրաստ է գործարք կնքել ուկրաինական հակամարտությունը լուծելու համար, սակայն չի հստակեցրել, թե ինչ պայմաններով:

«Նա ինձ ասաց, որ ցանկանում է գործարք»,- ասել է Թրամփը լրագրողներին՝ Սպիտակ տան կողմից հեռարձակվող Օվալաձեւ սենյակից:

Նա կոչ է արել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին նույնպես պատրաստ լինել գործարք կնքելուն, քանի որ կարծում է, որ դա կբխի Ռուսաստանի շահերից:

ԱՄՆ–Ի ՆՈՐ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Թուրքիայի ընդդմադիր Soscu լրատվամիջոցն անդրադարձել է ԱՄՆ-ի նորանշանակ պետքարտուղարին: Նշենք, որ ԱՄՆ-ում պետքարտուղար է նշանակվել հանրապետական սենատոր Մարկո Ռուբիոն, ում նշանակումը տվյալ պաշտոնում մտահոգություններ է առաջացրել Թուրքիայում: Ընդդիմադիր լրատվամիջոցի նշմամբ՝ Ռուբիոն հայտնի է հակաթուրքական հայտարարություններով, Չինաստանին ուղղված կոշտ քննադատություններով ու Իսրայելին աջակցող ուղերձներով: Հայտնում է ermenihaber.am-ը:

Soscu-ն առանձնացրել է Ռուբիոյի՝ Թուրքիայի եւ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հասցեին արված հայտարարությունները:

Մասնավորապես, Ռուբիոն նշել էր, որ Ռեջեփ Թայիփ Էրդողանի օրոք Թուրքիան անցում է կատարել ավտորիտար իշխանության եւ այդ երկրում մարդու իրավունքների խախտումները գնալով ավելանում են:

Նա պնդել էր, որ Էրդողանի կառավարությունը թուլացնում է ժողովրդավարական ինստիտուտները եւ դա, ըստ նրա, սպառնում է ՆԱՏՕ-ի արժեքներին եւ դաշինքի ներդաշնակությանը:

2017-ին Ռուբիոն նշել էր, որ եթե Թուրքիան ցանկանում է, որ իրեն վերաբերվեն որպես ԱՄՆ-ի դաշնակից, ուրեմն պետք է գործի դաշնակցի պես:

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀՐԴԵՀԻ ՁՈՀ Է ԴԱՐՁԵԼ 66 ՄԱՐԴ

Թուրքիայի Քարթալկայա լեռնադահուկային հանգստավայրում (Բոլու նահանգ) բռնկված հրդեհի զոհ է դարձել 10 մարդ: Այս մասին հայտարարել է հանրապետության ՆԳՆ ղեկավար Ալի Երլիքայան:

Նախկինում հաղորդվում էր վեց զոհի մասին:

«Քարթալկայա լեռնադահուկային կենտրոնում բռնկված հրդեհի հետեւանքով զոհերի թիվը հասել է 66-ի, 50-ը տուժել են»,- գրել է նախարարը X-ում:

Le monde

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ԲԱՔՎԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում սկսվել է 16 հայ բանտարկյալների, այդ թվում՝ ԼՂ-ի ութ նախկին ղեկավարների դատավարությունը:

Նրանց մեղադրանքները ներառում են «ահաբեկչություն», «անջատողականություն» եւ «ռազմական հանցագործություններ», գրել է Le monde-ն:

«Ադրբեջանական լրատվամիջոցները հրապարակել են նկարներ, թե ինչպես է ձերբակալվածներին ոստիկանական շարասյունը տանում զինվորական դատարան: Դատավարությունը դռնփակ չէր անցկացվում, սակայն միջազգային դիտորդներին կամ օտարերկրյա լրատվամիջոցներին մուտքն արգելված էր: Ամբաստանյալների թվում են Լեռնային Ղարաբաղի երեք նախկին նախագահներ Արայիկ Հարությունյանը, Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը: Խորհրդարանի վերջին ղեկավար Դավիթ Իշխանյանը, նախկին արտգործնախարար եւ նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանը, գեներալ Դավիթ Մանուկյանը, պաշտպանության նախկին նախարար Լեւոն Մնացականյանը եւ միլիարդատեր Ռուբեն Վարդանյանը նույնպես քրեական հետապնդման են ենթարկվում:

Ահաբեկչության, մարդկության դեմ հանցագործությունների եւ Ադրբեջանի դեմ հանցագործությունների մեջ մեղադրվող Վարդանյանը, ում դատելու են առանձին, մերժել է իրեն առաջադրված բոլոր մեղադրանքները: Առաջին նիստի նախօրեին նա իր ընտանիքի կողմից տարածած հայտարարության մեջ բողոքել է, որ ինքը բավարար ժամանակ չի ունեցել իր պաշտպանությունը նախապատրաստելու համար:

«Ես դեռ հնարավորություն չեմ ունեցել կարդալու պաշտոնական մեղադրական եզրակացությունը»,- պարզաբանեց նախկին ղեկավարը, ով հավելել է, որ ավելի քան 470 օր անցկացրել է բանտում, որից 340-ը՝ մեկուսարանում, 23-ը՝ կարգապահական խցում:

Նա վերահաստատել է իր «լիակատար անմեղությունը եւ հայրենակիցների անմեղությունը» եւ իր «պահանջը՝ անհապաղ դադարեցնել քաղաքականացված այս գործը»: Ընդհանուր առմամբ՝ Վարդանյանին սպառնում է 42 մեղադրանք, որոնցից մի քանիսը ցմահ ազատազրկմամբ են: Թերթը հիշեցրել է, որ 2023 թվականի սեպտեմբերին, Բաքուն ստացել է Լեռնային Ղարաբաղի ամբողջական վերահսկողությունը ռազմական հարձակման հետեւանքով, որը ստիպել է մոտ 100,000 հայ բնակիչների փախչել: Հայերը մտավախություն ունեն, որ Ադրբեջանի այսօրվա նախագահ Իլհամ Ալիեւը օգտագործում է դատավարությունը՝ վրեժ լուծելու եւ իր իմիջն իր երկրում ամրապնդելու համար: Լեռնային Ղարաբաղի նախկին պետնախարար, իրավունքների նախկին պաշտպան Արտակ Բեգլարյանը դատավարությունը դատապարտել է որպես «շոու, որը նպատակ ունի նվաստացնելու»:

Փաստաբան եւ իրավապաշտպան Սիրանուշ Սահակյանը, ով ներկայացնում է հայ բանտարկյալների շահերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, զգուշացրել է, որ դրանք կարող են հանգեցնել երկարաժամկետ կամ նույնիսկ ցմահ ազատազրկման: Հինգշաբթի իր մտահոգությունն է հայտնել նաեւ Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը:

«Հաշվի առնելով Իլհամ Ալիեւի վարչակարգի ավտոկրատական եւ ռասիստական բնույթը՝ այս «դատավարությունների» արդյունքը, ցավոք, կասկածից վեր է», - ընդգծվել է հայտարարության մեջ՝ կոչ անելով «անհապաղ եւ անվերապահ ազատ արձակել» բանտարկյալներին, ովքեր համարվում են «ապօրինի կալանավորված պատանդներ»:

«Արցախի Հանրապետության այս հայ քաղաքացիներն անարդարացիորեն հետապնդվում են ահաբեկչություն քարոզելու կեղծ մեղադրանքով, նրանց միակ «հանցագործությունը» հայկական ինքնությունն է», - ավելացրել է կազմակերպությունը:

Վարդանյանի դատավարությունը կվերսկսվի հունվարի 27-ին, իսկ մյուս 15 ամբաստանյալների դատավարությունը՝ երեքշաբթի՝ հունվարի 21-ին (չխմբ.): Հունվարի 8-ին Ալիեւի մեկնաբանությունները հազիվ թե հուսադրող լինեն հայերի համար: «Հայկական անկախ պետությունը, ըստ էության, ֆաշիստական պետություն է»,- հայտարարել է նա ադրբեջանական հեռուստատեսությանը տված հարցազրույցում:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը սա համարել է երկու երկրների միջեւ նոր հակամարտությունն արդարացնելու հնարավոր փորձ»:

Է. Մ.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԱՅԱՑԵԼ Է ԱԲԲԱՍ ԱՐԱՂՉԻԻ ԵՎ ՎԱՀԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի հետ հանդիպմանը հայտարարել է, որ Թեհրանը պատրաստ է նպաստել տարածաշրջանում խաղաղության եւ կայունության պահպանմանը. հայտնում է իրանական Mehr լրատվական գործակալությունը:

Գործակալությունը փոխանցում է՝ հանդիպման ընթացքում Իրանի ԱԳ նախարար Արաղչին Թեհրանի եւ Երեւանի միջեւ առկա հարաբերությունները համարել է բարենպաստ՝ ընդգծելով Իրանի հանձնառությունը Հայաստանի հետ երկկողմ կապերն էլ ավելի խորացնելու եւ ընդլայնելու հարցում:

«Իրանի ԱԳ նախարարը նաեւ հայտնել է Իրանի Իսլամական Հանրապետության պատրաստակամությունը՝ օգնելու տարածաշրջանում խաղաղության հաստատմանը եւ կայունության ու անվտանգության պահպանմանը»,-նշված է հաղորդագրության մեջ:

Նշվում է, որ Հայաստանի փոխարտգործնախարար Վահան Կոստանյանն իր հերթին բարձր է գնահատել Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումները տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ՝ ընդգծելով Հարավային Կովկասում խաղաղություն եւ անվտանգություն հաստատելու Հայաստանի ցանկությունը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՄՈՏ ԴԱՆԱԿ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի թղթակիցը Ազգային ժողովից հայտնել է, որ երեկ խորհրդարանի մուտքի մոտ լարված իրավիճակ էր: Բանն այն է, որ ԱԺ մուտք գործող օպորատորի մոտ ՊՊԾ-ն փոքրիկ դանակ է հայտնաբերել: Օպերատորը խնդրել է դանակը վերցնել եւ թույլ տալ աշխատանքը շարունակել ԱԺ-ում, սակայն ՊՊԾ աշխատակիցներն անդրդվելի են:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Newday.am կայքի օպերատորին բերման են ենթարկել ոստիկանություն:

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԻՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՔՆՆԱՐԿՎԵԼ

Հունվարի 18-19-ը տեղի է ունեցել ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության բարեփոխումների շրջանակում տարբեր իրավական ակտերի նախագծերի քննարկում, որին մասնակցում էր ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը:

Մասնակցում էին Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը, ՆԳՆ փոխնախարար Արմեն Ղազարյանը, Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության պետ Նելլի Դավթյանը, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի, Միգրացիայի միջազգային կազմակերպության, ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, իրավաբաններ, փորձագետներ:

Աշխատաժողովում քննարկվել են «ՀՀ քաղաքացիության մասին», «Օտարերկրացիների մասին», «Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքներում եւ հարակից այլ իրավական ակտերում նախաձեռնված փոփոխությունները:

Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության ինստիտուցիոնալ փոփոխությունների շրջանակում Արփինե Սարգսյանն ընդգծել է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի փոփոխությունների նախաձեռնությունը, որի նպատակը այն տեղեկատվության առաջնային եւ ճշմարիտ աղբյուր դարձնելն է, անձի տվյալների եւ իրավական ինքնության պաշտպանվածության բարձրացումն ու փոխգործելի շտեմարանների հետ հստակ ու կայուն կապ ապահովելը:

Ըստ նախարարի՝ բնակչության պետական ռեգիստրը պետք է ինքնին որոշակի ծառայությունների մատուցման աղբյուր լինի եւ լինի պետության ձեռքում հուսալի գործիք՝ տարբեր ոլորտային ռազմավարական մոտեցումներ որդեգրելու համար:

Արմեն Ղազարյանը, անդրադառնալով միգրացիայի կառավարման համակարգում թվային գործիքների ներդրմանը, նշել է,որ արդյունքում կլինեն բավարար քանակությամբ տվյալներ եւ վիճակագրություն, ինչը կնպաստի թիրախային քաղաքականության մշակմանը մասնավորապես միգրացիայի կառավարման ոլորտում:

Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամները, ի դեմս նախագահ Վլադիմիր Վարդանյանի, բարձրաձայնել են նախագծերի տարբեր դրվագներում իրենց առաջարկները, որոնք բազմակողմ քննարկվել են, ձեռք են բերվել պայմանավորվածություններ:

Միգրացիոն գործընթացների արդիականացումը կնպաստի դրանք համաշխարհային ստանդարտներին համապատասխանեցնելու հանձնառությանը՝ միաժամանակ ծառայելով նաեւ ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման երկխոսության համատեքստում առաջադրվելիք թիրախներին հասնելու գործընթացին:

Աշխատաժողովի կազմակերպման աշխատանքներին աջակցել են ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը, «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպությունը, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՑԱՆԿԱՑԵԼ ԵՆ ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ ԶՈՀՎԱԾԻ ԾՆՈՂԻՆ

Եռաբլուրում ԱԺ պատգամավորներ Հովիկ Աղազարյանի եւ Հակոբ Ասլանյանի հետ միջադեպի մասնակից, զոհված զինծառայող Լեւոն Գալստյանի հոր՝ Արմեն Գալստյանին ցանկացել են կալանավորել: Սակայն, ինչպես հայտնեց փաստաբան Վարդուհի Սարգսյանը, զոհված զինծառայող Լեւոն Գալստյանի հոր՝ Արմեն Գալստյանի կալանքի միջնորդությունը կրկին մերժվեց դատարանի կողմից՝դատավոր Նելլի Բաղդասարյանի որոշմամբ:

Մեղադրյալի նկատմամբ կիրառվեց վարչական հսկողություն:

Հիշեցնենք, որ 2023 թվականի սեպտեմբերի 21-ին ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանի եւ 44-օրյա պատերազմի հերոս Լեւոն Գալստյանի հոր՝ Արմեն Գալստյանի միջեւ Եռաբլուրում միջադեպ էր եղել, ինչի ժամանակ զոհված զինվորներից մեկի ծնողը ապտակել էր խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանին, իսկ նա էլ հայհոյել էր ծնողին:

Այս գործը դատարանում է, եւ կրկին զոհված զինծառայողի հորը ցանկացել են խուլիգանության քրեական վարույթի շրջանակներում կալանավորել, սակայն դատարանը մերժել է, եւ սահմանվել է վարչական վերահսկողություն:

ԱՐԴԱՐ Է 30–40 ՏԱՐԻ ԱՌԱՋՎԱ ԳՈՒՅՔԻ ԾԱԳՈՒՄ ՊԱՀԱՆՋԵԼ

Գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով հայտարարված մրցույթին բավարարվել են երկու հավակնորդների՝ Էդգար Արսենյանի եւ Գեւորգ Քոչարյանի հայտերը: Թե կոնկրետ որ օրը կլինի մրցույթը, դեռեւս հայտնի չէ, բայց ըստ օրենքի՝ այն պետք է անցկացվի մրցույթի համար դիմելու վերջնաժամկետից առավելագույնը մեկ ամսվա ընթացքում:

Մրցույթի համար հայտերի ընդունման վերջնաժամկետը եղել է 2024-ի դեկտեմբերի 25-ը, այսինքն՝ մինչեւ այս տարվա հունվարի 25-ը մրցույթը պետք է կայանա: Արսենյանը եղել է Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի գործով դատախազ:

Սարգսյանը, հիշեցնենք, արդարացվել է. այժմ Դատախազությունը վերաքննիչ բողոք է ներկայացրել եւ պահանջում է Սարգսյանին մեղավոր ճանաչել: 2024-ի տարեվերջին Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը վարչապետ Նիկոլ Փաշինյանի SMS-ից հետո հրաժարականի դիմում էր ներկայացրել:

Ստացվում է՝ այն կառույցի ղեկավարը, որի քննած գործերի օրինականության նկատմամբ հսկողություն է իրականացնում Էդգար Արսենյանի ղեկավարած վարչությունը, հրաժարականի դիմում է ներկայացրել:

Եվ ահա Էդգար Արսենյանին մի քանի հարց ուղղեցինք, թե նա արդա՞ր է համարում, որ մարդկանցից 30-40 տարի առաջվա գույքի ծագումն է պահանջվում, երբ այդ տարիներին արդեն շատ մարդ մահացել է, սա իրավաբանությո՞ւն է, հարցրել ենք նաեւ թե նրա տանը 30-40 տարվա վաղեմության ինչ փաստաթուղթ կա:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆՇԱՆԱԿՎԵԼ Է «ԱԶԱՏՈՒՄ» ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ

ՆԳ նախարարությունում 2024 թվականի ընթացքում հրավիրվել է կարգապահական հանձնաժողովի 6 նիստ, որոնց ընթացքում քննարկվել է ոստիկանության 45 ծառայողի վերաբերյալ իրականացված ծառայողական քննությունների 40 նյութ: Քննարկման արդյունքներով՝ ՆԳ նախարարի եւ ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի հրամաններով ոստիկանության 43 ծառայողի նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր:

«Մասնավորապես, 3 ծառայողի հայտարարվել է «նկատողություն», 3 ծառայողի հայտարարվել է «խիստ նկատողություն», իսկ 37 ծառայող ազատվել է ՆԳՆ ոստիկանությունում ծառայությունից: Բացի այդ, 1 ծառայողի նկատմամբ իրականացված ծառայողական քննությունը դադարեցվել է, իսկ 1 ծառայողի նկատմամբ իրականացված ծառայողական քննության նյութերի եւ դրա արդյունքներով կազմված եզրակացության քննարկումը հետաձգվել է»,- նշված է ՆԳ նախարարության տարածած հաղորդագրության մեջ:

ՏՂԱՄԱՐԴԸ ՆՌՆԱԿ Է ՆԵՏԵԼ ԲՆԱԿՉԻ ՏԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Երեկ՝ հունվարի 21-ին, արտակարգ դեպք է տեղի ունեցել Սյունիքի մարզում: Ժամը 10:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ոստիկանության Սիսիանի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Սիսիան քաղաքի Պարույր Սեւակի փողոցի տներից մեկում պայթյուն է տեղի ունեցել:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ոստիկաններն ու պարեկները սեփական տան բակում հայտնաբերել են պայթուցիչ եւ դռան կոտրված ապակիներ:

Ըստ նախնական տեղեկությունների՝ բարեբախտաբար տուժածներ չկան:

Մինչ դեպքի վայրում աշխատում էին քննչական խումբն ու փորձաքրեագետը, Սիսիանի ոստիկանները հերթական օպերատիվ տեղեկություններով պարզում են, որ արարքը կատարել է Սյունիքի մարզի բնակիչ 50-ամյա Կարեն Վ.-ն:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ նա այցելել է նշված տուն եւ նռնակ է նետել, ինչի հետեւանքով էլ պայթուցիչը պայթել է:

Նրա նկատմամբ մի քանի քրեական գործեր կան հարուցված:

Նախաքննության շահերից ելնելով՝ այս պահին որոշ հանգամանքներ չեն հրապարակվում:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հունվարի 20-ից 21-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 135 դեպք, որից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

110 ՀԱԶԱՐԻՑ ԸՆԴԱՄԵՆԸ 6 ՀԶ. 277 ՀԱ-Ն Է ՈՌՈԳՎՈՒՄ

Տավուշի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողային հաշվեկշռի, 110 665,6 հեկտար են, որից վարելահող՝ 25485,3 հեկտար, բազմամյա տնկարկներ՝ 1981,8 հեկտար, այդ թվում խաղողի այգիներ՝ 1195,3 հեկտար, պտղատու այգիներ՝ 786,5 հեկտար, խոտհարքներ՝ 9400,6 հեկտար, արոտավայրեր՝ 63006 հեկտար, այլ հողատարածքներ՝ 10791,8 հեկտար: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝ որքա՞ն են կազմում մարզի ոռոգելի հողերը, որ համայնքում՝ քանի՞ հեկտար: Մարզպետարանից պատասխանել են. «Համաձայն ՀՀ կառավարության՝ 23.10.2000թ. N656 որոշման, յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշիռը կազմվում է հողերի պետական հաշվառման տվյալ տարվա ընթացիկ տվյալների հիման վրա՝ յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ: Տրամադրվող տեղեկատվությունը կազմված է 01.07.2024թ. դրությամբ՝ Իջևան 1298.1 հա, Դիլիջան 68.2 հա, Բերդ 1581.3 հա, Նոյեմբերյան 3530.0 հա»: Այսպիսով՝ Տավուշում ոռոգելի հողերը ընդհանուր 6277,6 հեկտար են:

ԱՇԱԿԵՐՏԻՆ ԾԵԾԱԾ ՈՒՍՄԱՍՎԱՐԸ ԴԵՌ ԴՊՐՈՑՈՒՄ Է

2024 թ. նոյեմբերի 1-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, ՀՀ ներքին գործերի նախարարության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Իջևանի բաժնում տեղեկություն է ստացվել, որ Աչաջուր գյուղի Հ. Թամրազյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրենի ուսումնական գծով տեղակալ, 70-ամյա Արմենակ Ասիլբեկյանը դպրոցում ծեծի է ենթարկել 9-րդ Բ դասարանի 14-ամյա աշակերտին, որի հետեւանքով երեխայի մարմնի վրա առաջացել են կապտուկներ: Նույն օրը երեխան հրավիրվել է ոստիկանության Իջևանի բաժին, ուր իր մայրիկի եւ մանկավարժի ներկայությամբ հայտնել է, որ դասաժամի ընթացքում, իր պայուսակում էլ. ծխախոտի փոխարինիչ հայտնաբերելուց հետո, Արմենակ Ասիլբեկյանը մի քանի անգամ հարվածել է իր դեմքի եւ մարմնի տարբեր հատվածներին, որից հետո դուրս է բերել միջանցք, կրկին հարվածներ հասցրել, ապա իրեն տարել է Աչաջրի դպրոցի տնօրեն 42-ամա Ստելլա Փիրումյանի աշխասենյակ եւ այնտեղ 2 անգամ հարվածել է մեջքին՝ պատճառելով ֆիզիկական ցավ: Արմենակ Ասիլբեկյանը ձերբակալվել էր, դեպքի մասին հաղորդումը եւ կից փաստաթղթերը ներկայացվել էին քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչություն:

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝ նոյեմբերի 1-ին Աչաջրի դպրոցի դաստիարակչական գծով փոխտնօրեն Արմենակ Ասիլբեկյանի կողմից դպրոցի 9-րդ դասարանցուն ծեծի ենթարկելու առթիվ քրեական գործ հարուցվե՞լ է, փոխտնօրենին մեղադրանք առաջադրվե՞լ է, նա շարունակո՞ւմ է աշխատել դպրոցում: Մարզպետարանից պատասխանել են. «Ձեր կողմից նշված գործը իրավապահ մարմինների տիրույթում է: Արմենակ Ասիլբեկյանը շարունակում է աշխատել, քանի որ իրավապահ մարմիններից նրա աշխատանքը կասեցնելու համար գրություն չենք ստացել»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՐՔԱԲԱՆՈՒՄ Է ՊԵԿ-Ը

ՈՎՔԵ՞Ր, Ո՞Ր ԴԵՊՔԵՐՈՒՄ ՊԵՏՔ Է ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ

Հաշվի առնելով եկամուտների տարեկան հայտարարագրման թեմայի հանրային հնչեղությունը եւ բազմաթիվ հարցերը՝ ՀՀ ՊԵԿ-ն այսուհետեւ իր սոցիալական հարթակներում պարբերաբար կդատասխանի ամենահաճախ տրվող հարցերին:

«Մեր նպատակն է պարզ եւ հանրամատչելի ներկայացնել հայտարարագրման գործընթացը, հիմնական քայլերը եւ խուսափել հնարավոր տարընկալումներից: Եթե ունեք հարցեր, որոնք դեռեւս պատասխան չեն ստացել, կարող եք դրանք ուղղել մեզ՝ մեկնաբանություններում կամ անձնական հաղորդագրության միջոցով»,- հայտնում են ՊԵԿ-ից:

Հարցուպատասխանում կարելի է պարզել, թե 2025 թվականին՝ 2024 թվականի հաշվետու տարվա համար Դուք պե՞տք է ներկայացնեք հայտարարագիր, թե ոչ:

Հարց 1. Արդյո՞ք 2025 թվականին պետք է ներկայացնեք եկամուտների հայտարարագիր:

-Եթե Դուք ՀՀ ռեզիդենտ ՀՀ քաղաքացի եք եւ 2024 թվականի ընթացքում եղել եք վարձու (աշխատանքային պայմանագրի համաձայն) աշխատող կամ աշխատել եք քաղաքացիաիրավական պայմանագրով եւ դրա շրջանակում ստացել եք եկամտային հարկով հարկվող եկամուտ կամ նախորդ տարի՝ 2023 թվականի հաշվետու տարվա համար ներկայացրել եք հայտարարագիր, ինչպես նաեւ ներառված եք 2025 թվականին հայտարարագիր ներկայացնողների մյուս խմբերում (ամբողջական ցանկը՝ կայքում), ապա, ԱՅՈ՛, այս տարի պետք է ներկայացնեք եկամուտների տարեկան հայտարարագիր:

Հարց 2. Արդյո՞ք պետք է ներկայացնեք հայտարարագիր, եթե 2024 թվականին աշխատել եք մի քանի ամիս:

-Այո՛, Դուք պետք է ներկայացնեք հայտարարագիր անգամ այն դեպքում, երբ 2024 թվականին աշխատել եք ընդամենը մեկ ամիս, ընդ որում, հայտարարագիրը պետք է ներկայացնեք ամբողջ տարվա համար:

Հարց 3. Եթե 2024 թվականին ներկայացրել եք հայտարարագիր, արդյո՞ք այս տարի եւս պետք է ներկայացնեք հայտարարագիր:

-Այո՛, եթե 2024 թվականին՝ 2023 թվականի հաշվետու տարվա համար ներկայացրել եք հայտարարագիր, ապա այս տարի եւս պետք է ներկայացնեք հայտարարագիր, անգամ այն դեպքում, երբ 2024 թվականի ընթացքում չեք աշխատել կամ հայտարարատու չեք մյուս բոլոր հիմքերով:

Հարց 4. Եթե չունեք ՀՀ քաղաքացիություն կամ ունեք միայն ՀՀ կացության կարգավիճակ, բայց բնակվում եւ աշխատում եք Հայաստանում, արդյո՞ք պետք է ներկայացնեք հայտարարագիր:

-Ո՛չ, հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեն միայն ՀՀ ռեզիդենտ ՀՀ քաղաքացիները:

Հարց 5. Ինչպե՞ս պարզել ՀՀ ռեզիդենտ եք, թե ոչ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվելու համար:

-Դուք պետք է հարկային տարվա ընթացքում 183 օր եւ ավելի փաստացի գտնվեք Հայաստանում եւ (կամ) Ձեր կենսական շահերի կենտրոնը գտնվի Հայաստանում, այսինքն՝ Ձեր ընտանիքը, տունը կամ բնակարանը, անձնական կամ ընտանիքի հիմնական գույքը, մասնագիտական կամ այլ գործունեության վայրը պետք է գտնվի Հայաստանում: Ռեզիդենտներ են համարվում նաեւ Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մեջ գտնվող՝ ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձինք:

Հարց 6. Արդյո՞ք պետք է ներկայացնեք հայտարարագիր, եթե ՀՀ քաղաքացի եք, բայց աշխատում եւ բնակվում եք արտերկրում:

-Եթե Դուք ՀՀ քաղաքացի եք, բայց աշխատում եւ բնակվում եք արտերկրում, ապա հայտարարագիր կներկայացնեք միայն այն դեպքում, եթե համարվում եք նաեւ ՀՀ ռեզիդենտ: (Տե՛ս հարց 5. ինչպե՞ս պարզել ՀՀ ռեզիդենտ եք, թե ոչ):

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒՄ Է

7 ՕՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է 4653 ԽԱԽՏՈՒՄ

Հունվարի 13-ից 20-ը մայրաքաղաքում իրականացված ծառայության ընթացքում Երեւանի պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 4653 խախտում՝ պահպանվող հատուկ տարածք տեղափոխելով 283 մեքենա:

Մասնավորապես, հայտնաբերվել է ոչ սթափ վիճակում մեքենա վարող՝ 179, առանց վարորդական իրավունքի վկայականի՝ 303 անձ: Հայտնաբերվել են հաշվառման համարանիշի հետ կապված՝ 37, չամրակապված վարելու՝ 1015, վարելիս ծխախոտային արտադրատեսակ օգտագործելու՝ 266, վարելիս հեռախոսից օգտվելու՝ 230, հետիոտնի՝ ոչ սահմանված վայրով անցնելու՝ 137 եւ 1658 այլ իրավախախտումներ: 161 մեքենա շահագործվել է առանց ԱՊՊԱ պայմանագրի, 318-ը՝ տեխնիկական զննություն չանցած, 69-ը՝ արտաքին լուսային սարքերի անսարքությամբ, 166-ը՝ թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով: Բացի այդ, տարբեր կասկածանքներով ձերբակալվել ու բաժիններ է տարվել 115 անձ:

Նույն ժամանակահատվածում մարզերում պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 14 030 խախտում՝ պահպանվող հատուկ տարածքներ տեղափոխելով 241 տրանսպորտային միջոց: Հայտնաբերվել է ոչ սթափ վիճակում մեքենա վարող՝ 203, առանց վարորդական իրավունքի վկայականի՝ 746 անձ:

Հայտնաբերվել են հաշվառման համարանիշի հետ կապված՝ 89, չամրակապված վարելու՝ 3110, վարելիս ծխախոտային արտադրատեսակ օգտագործելու՝ 307, վարելիս հեռախոսից օգտվելու՝ 486, հետիոտնի՝ ոչ սահմանված վայրով անցնելու՝ 60, արագության գերազանցման՝ 1774 եւ 4019 այլ իրավախախտումներ: 467 մեքենա շահագործվել է առանց ԱՊՊԱ պայմանագրի, 1779-ը՝ տեխնիկական զննություն չանցած, 501-ը՝ արտաքին լուսային սարքերի անսարքությամբ, որից 16-ը՝ բեռնատարներ, 234-ը՝ թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով: Բացի այդ, տարբեր կասկածանքով ձերբակալվել ու բաժիններ է տարվել 49 անձ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 18 պատահար. 1 մարդ զոհվել է, 23-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱԿՑԻԱ

3 ԱՆՎՃԱՐ ՈՒՂԵՏՈՄՍ՝ ԱՌԱՋԻՆ ՏՈՄՍԸ ԳՆԵԼԻՍ

TELCELL

«3 անվճար ուղետոմս Telcell Wallet-ով առաջին տոմսը գնելիս» ակցիան շարունակվում է մինչեւ հունվարի 31-ը ներառյալ:

Telcell Wallet հավելվածով առաջին անգամ տրանսպորտի ցանկացած մեկ ուղետոմս ձեռք բերելիս օգտատերերը կստանան տրանսպորտի 3 անվճար տոմս. (ավտոբուս/մետրո):

Նվեր տոմսերը հասանելի կլինեն Telcell Wallet հավելվածի «Տրանսպորտ» բաժնում:

Դրանք վավերական կլինեն 3 օր:

Ինչպե՞ս ստանալ 3 անվճար տոմս

1. Մուտք գործել Telcell Wallet հավելված:
2. Գլխավոր էջի «Ծառայություններ» բաժնում սեղմել «Տրանսպորտ»:
3. Սեղմել «Գնել ուղետոմս», ընտրել տրանսպորտային միջոցը՝ «Տրոլեյբուս», «Ավտոբուս եւ մետրո» կամ «Օդանավակայան», այնուհետեւ տոմսի քանակը, վճարման եղանակը եւ սեղմել «Շարունակել»:
4. Սեղմել «Վճարել»:
5. Վճարումը հաստատելուց հետո օգտատերը ստանում է ծանուցում տոմսերի նվերների մասին, որոնք հայտնվում են «Ուղետոմս» բաժնում:

Հավելվածում տրանսպորտի առաջին տոմսի գնման ավարտից հետո օգտատերը ավտոմատ կերպով կստանա տրանսպորտի 3 անվճար տոմս (ավտոբուս/մետրո): Նվերը յուրաքանչյուր օգտատիրոջ համար միանվագ է:

Անհրաժեշտ է իմանալ

- Արշավին կարող են մասնակցել Telcell Wallet հավելվածի ամբողջովին նույնականացում անցած օգտատերերը, որոնք կցել են անձնագիրը, իրենց պատկանող բանկային քարտը կամ ունեն Telcell Wallet բացված բանկային հաշիվ:
- Եթե նույնականացումը չի ստացվում, անհրաժեշտ է կապ հաստատել 8830 կարճ համարով կամ գրել անձնական նամակ:
- Օդանավակայանի ուղետոմս գնելու դեպքում նվեր է տրվում ավտոբուսի կամ մետրոյի ուղետոմս (ոչ օդանավակայանի):
- Նվեր չի տրվում տերմինալից ուղետոմս գնելիս, միայն այն դեպքում, երբ առաջին տոմսը գնվել է Telcell Wallet-ով (անկախ գնված ուղետոմսերի քանակից):

.Եթե նախկինում Telcell Wallet-ով գնվել է ուղետոմս, ապա օգտատերը նվեր չի կարող ստանալ:

- Եվս մեկ անգամ հիշեցնենք, որ նվեր տոմսերի վավերականության ժամկետը 3 օր է:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ ընկերությունը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

«ՖԱՍԹ» ԲԱՆԿ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ Է «ԿՈՄԻՏԱՍ ՊԱՐԿ»-Ի ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ

«Ֆասթ» բանկը հնարավորություն է տալիս անշարժ գույք ձեռք բերել «Կոմիտաս Պարկ» բազմաֆունկցիոնալ բնակելի թաղամասից բանկի վարկավորմամբ: Առաջարկը գործում է «Կոմիտաս Պարկ» թաղամասի Ն. Տիգրանյան փողոցի 1-ին փակուղի թիվ 1 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքից գույք ձեռք բերելու դեպքում: «Ֆասթ» բանկի եւ կառուցապատող «Օրդ Դեվելոփմենթ» ընկերության գործակցության շրջանակներում հիփոթեքային վարկի անվանական (ճշգրտվող) տոկոսադրույքը կազմում է 13%, տարեկան փաստացի տոկոսադրույքը՝ 13,88%, իսկ նվազագույն կանխավճարը՝ 10%:

«Ֆասթ» բանկի մանրածախ բիզնեսի կառավարման ծառայության ղեկավար Տիգրան Սարգսյանը նշել է. «Այս գործակցությունը մեզ համար առաջնային նշանակություն ունի, հաշվի առնելով նախագծի քաղաքաշինական նշանակությունը, ինչպես նաեւ նոր կառուցվող բնակարանների՝ քաղաքացիներին ավելի հասանելի դարձնելու մեր նպատակը: Սույն առաջարկից կարող են օգտվել նաեւ «Հիփոթեքային վարկեր երիտասարդ ընտանիքներին», ինչպես նաեւ «ՊՆ եւ ԱԱԾ ծառայողների պետական աջակցության» ծրագրերի շրջանակներում»:

Հավելենք, որ բանկը ֆինանսավորում է ինչպես բնակարանների, այնպես էլ ավտոկայանատեղիների ձեռքբերումը նույն պայմաններով:

«Օրդ Դեվելոփմենթ» ընկերության փոխտնօրեն Սամվել Օրդուխանյանը տեղեկացրել է, որ այս նախագիծը «Կոմիտաս պարկ» համալիրի արդեն 3-րդ փուլն է, որը ներառում է 1500 բնակարան, նույնքան ավտոկայանատեղի, ինչպես նաեւ հասարակական տարածքներ: Հատկանշական է, որ բնակարաններից շուրջ 500-ը խաղարկությամբ տրամադրվել է հատուկ գնով. «Ուրախ ենք, որ «Ֆասթ» բանկը հանդիսանում է մեր գործընկեր բանկը: Փորձել ենք համատեղ ուժերով մեր շահառուներին ներկայացնել լավագույն պայմաններ: Մեզ համար առաջնային է անվտանգության եւ ապահովության սկզբունքը, կառուցում ենք սեյսմակայուն, անվտանգ եւ միաժամանակ հարմարավետ շենքեր, որոնք համապատասխանում են ժամանակակից քաղաքաշինական նորմերին: Բուլվարը համալրվում է նաեւ բարձրահարկ կառույցով, որը վերջնական տեսք է հաղորդում մեր քաղաքի կարեւորագույն առանցքին՝ Հյուսիսային ճառագայթին», - ասել է նա:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: «Ֆասթ» բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

«Ֆասթ» բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԻ» Profit+ ՓԱԹԵԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է

«Հայէկոնոմբանկի» Profit+ աշխատավարձային փաթեթի ժամկետը երկարաձգվել է մինչեւ 31.03.2025թ.: Դիմելով Guru քարտատեսակներից որեւէ մեկի համար՝ Visa Classic, Mastercard Standard, ArCa Classic աշխատավարձային քարտերը հաճախորդները կստանան անվճար, իսկ Guru քարտերը կարող են ձեռք բերել իջեցված տարեկան վճարով՝ Guru քարտեր՝ 1000 դրամ, Guru Travel՝ 12,000 դրամ: Արդյունքում հաճախորդները կկանխիկացնեն իրենց աշխատավարձն առանց վճարի, իսկ միջոցները տեղափոխելով Guru քարտերին կստանան.

5-1% cashback բոլոր անկանխիկ վճարումների համար

4% եկամուտ դրամային հաշվի վրա

մինչեւ 51 օր անտոկոս ժամանակահատվածով վարկային գիծ

եւ բազում այլ առավելություններ:

Այս ամենից բացի հաճախորդներին սպասվում են բազում այլ պլյուսներ.

աշխատավարձային վարկային գիծ եկամտի տասնապատիկի չափով՝ կախված աշխատատեղի ոլորտից՝ սկսած 13.5%-ից

անշարժ գույքի գրավով վարկեր՝ մինչեւ 1% իջեցված տոկոսադրույքով

անվճար հաշիվ

24/7 հասանելի մոբայլ հավելված

բանկոմատների եւ մասնաճյուղերի լայն ցանց:

Ակցիան չի տարածվում AEB Mobile հավելվածով քարտեր պատվիրելիս. անհրաժեշտ է մոտենալ «Հայէկոնոմբանկի» ցանկացած մասնաճյուղ կամ գլխամասային գրասենյակ:

AEB Guru Digital քարտերի համար ակցիայի ժամանակահատվածում բոլոր հաճախորդների համար կգործի 50% զեղչ՝ 1,000 դրամ տարեկան վճար AEB Mobile հավելվածով պատվիրելու դեպքում:

Մանրամասների համար՝ https://www.aeb.am/hy/hatuk-arajark-profit/

«ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊԸ» ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ Է ՄԵՂԱԴՐԱՆՔԻՆ

«Ջերմուկ Գրուպ»-ը անդրադարձել է ՌԴ-ում «Ջերմուկ Գրուպ»-ի վերաբերյալ հնչած մեղադրանքին. «Ռուսական լրատվամիջոցներով «Ջերմուկ Գրուպ» ՓԲ ընկերության դեմ ներկայացված հայցի վերաբերյալ հրապարակումների կապակցությամբ հայտնում ենք, որ հրապարակումներում տեղ են գտել իրականությանը չհամապատասխանող, զրպարտություն հանդիսացող եւ անմեղության կանխավարկածը խախտող տեղեկություններ, քանի որ ոչ հարուցված քրեական վարույթի շրջանակներում, ոչ էլ իրականացված բազմաթիվ ստուգումներից (այդ թվում՝ ՌԴ պետական իրավասու մարմինների կողմից իրականացված) որեւէ մեկով չի հիմնավորվել, որ ՌԴ Վլադիկավկազ քաղաքի բնակիչ Օլեգ Գուսովի մահը վրա է հասել «Ջերմուկ» հանքային ջուր խմելու կամ գործարանային արտադրության շշալցված «Ջերմուկ» հանքային ջրի շշի պարունակությունը խմելու արդյունքում:

Մահացած անձի ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայցը ամբողջությամբ անհիմն է, քանի որ բացառվում է կապը «Ջերմուկ» հանքային ջրի եւ ՌԴ Վլադիկավկազ քաղաքի բնակչի հետ տեղի ունեցած ցավալի դեպքի միջեւ, հետեւաբար եւ բացառվում է «Ջերմուկ Գրուպ» ՓԲ ընկերության մեղքը:

Ավելին՝ Օլեգ Գուսովի մահվան առնչությամբ ՌԴ իրավապահների կողմից հարուցված քրեական վարույթում «Ջերմուկ Գրուպ» ՓԲ ընկերությունը նույնիսկ չի հանդիսանում վարույթին ներգրավված անձ:

Օլեգ Գուսովի մահվան դեպքից հետո ՀՀ իրավասու մարմինների կողմից իրականացվել եւ ռուսական կողմին են ներկայացրել համապատասխան ապացույցներ՝ հիմնված ստուգումների վրա: Բազմաթիվ ստուգումներ են իրականացվել նաեւ ՌԴ իրավասու մարմինների կողմից, որոնց արդյունքները եւս ապացուցել են, որ «Ջերմուկ» հանքային ջուրը համապատասխանում է միջազգային ստանդարտներով սահմանված պահանջներին եւ նախատեսված է սննդի մեջ օգտագործելու համար:

Վերը նշված ապացույցների բավարար լինելու մասին է վկայում նաեւ այն հանգամանքը, որ ՌԴ ամբողջ տարածքում վերացվել են «Ջերմուկ» հանքային ջրի վաճառքի նկատմամբ կիրառված արգելքները:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՋՈՐՋ ՕՐՈՒԵԼ. ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

«ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՍ ԳՐԵԼ ԵՄ 5 ԿԱՄ 6 ՏԱՐԵԿԱՆՈՒՄ»

Դեռ 1949 թվականին լույս տեսած գրքում կային այնպիսի նախազգուշացումներ, դրվագներ եւ կերպարներ, որոնք թե՛ ափխարհի, թե՛ Հայաստանի այսօրվա պատմության մի մասն են նկարագրում:



Խոսքը անգլիացի գրող Ջորջ Օրուելի «1984» հակաուտոպիական վեպի մասին է, որը, միանշանակ գերել եւ գերում է շատ ընթերցողների սրտերը:

Օրուելի «1984» վեպում, անկասկած, ներքին գաղտնագրերն ավելի խոր շերտեր ու ակնարկներ էին պարունակում:

Հունվարի 21-ը Ջորջ Օրուելի հիշատակի օրն է:

Օրուելի ձեռագիրը մինչ այժմ էլ արդիական է, սիրված, շատ քննարկված ու քննադատված:

ArmLur.am-ը ներկայացնում է գրողի կյանքից հետաքրքիր դիպվածներ եւ յուրօրինակ մտքեր:

Ինչո՞ւ էր ստեղծագործում Օրուելը: Իր հուշերում նա գրել է. «Ես ընտանիքում երեք երեխաներից միջնեկն էի: Մեր միջեւ հինգ տարվա տարբերություն կար, եւ մինչեւ ութ տարեկանը ես շատ հազվադեպ էի տեսնում հորս: Այս եւ մյուս պատճառներով ինչ-որ տեղ ինձ միայնակ էի զգում եւ շուտով ոչ հաճելի վարքագիծ ձեռք բերեցի, որը հակակրանք էր առաջացնում ընկերներիս շրջանում դպրոցական տարիներին: Միայնակ երեխաներին հատուկ պատմություններ հորինելու եւ երեւակայական կերպարների հետ զրուցելու սովորություն ունեի, եւ կարծում եմ, իմ գրական նկրտումները ամենասկզբից էլ լի են եղել մեկուսացած եւ թերագնահատված լինելու զգացումներով: Գիտեի, որ խոսքի շնորհք ունեմ ու տհաճ փաստերին առերեսվելու ուժ, եւ զգում էի, որ այն մի տեսակ առանձին աշխարհ է ստեղծել, որտեղ ես կարող էի վերադարձնել ինքս ինձ այն, ինչ կորցնում էի առօրյա կյանքում: Այնուամենայնիվ, մանկության ու պատանեկության ողջ ընթացքում գրված լուրջ ստեղծագործություններիս (նկատի ունեմ լրջորեն գրված գործերը) ընդհանուր ծավալը մեկ տասնյակ էջ էլ չէր կազմում: Իմ առաջին բանաստեղծությունը գրել եմ հինգ կամ վեց տարեկանում. մայրս այն գրեց իմ թելադրանքով: Ես ոչինչ չեմ հիշում այդ բանաստեղծությունից, միայն հիշում եմ, որ այն վագրի մասին էր, եւ այդ վագրը աթոռի նման ատամներ ուներ (բավական լավ համեմատություն)»:

Եթե փոքրիկ Օրուելը օրերից մի օր իրեն միայնակ չզգար, ապա գուցե այսօր չլինեին «Անասնաֆերմա» կամ «Անասնական ագարակ», «1984», «Քահանայի դուստրը» եւ այլ ստեղծագործությունները:

ArmLur.am-ը ներկայացնում է նաեւ գրողի հետաքրքիր մտքերը:

1. Մարդու ամենավատ թշնամին նրա նյարդային համակարգն է: Ցանկացած պահի ներքին լարվածությունը կարող է արտացոլվել արտաքինում:

2. Ինչ-որ կերպ հնարավոր է կառուցել գաղտնի աշխարհ, որտեղ կարող ես ապրել ուզածիդ պես: Դրա համար միայն հաջողություն է պետք, մեկ էլ ճարպկություն ու խիզախություն պիտի ունենաս:

3. Անգործունակ պետությունը վաղ թե ուշ պարտվում է, իսկ գործունակությունը չի կարող հիմնվել պատրանքների վրա: Բացի այդ, գործունակ լինելու համար անհրաժեշտ էր դասեր քաղել անցյալից, նշանակում է՝ բավական ճշգրիտ գաղափար ունենալ այն մասին, թե ինչ է եղել անցյալում:

4. Մահը երբեք չի գալիս, երբ նրան սպասում ես:

5. Կա միայն չորս միջոց, որով իշխող խումբը կարող է գահընկեց արվել: Կամ նվաճվում է դրսից, կամ անարդյունավետ է ղեկավարում, եւ զանգվածները ցանկանում են ապստամբել, կամ դա թույլ է տալիս ձեւավորել ուժեղ ու դժգոհ միջին դաս, կամ կորցնում է ինքնավստահությունն ու կառավարելու պատրաստակամությունը: Այս պատճառները չեն ազդում առանձին-առանձին, եւ որպես կանոն՝ չորսն էլ ինչ-որ չափով ներկա են: Իշխող դասը, որը կարող է պաշտպանվել բոլորից, մշտապես մնում է իշխանության գլխին: Վերջին հաշվով որոշիչ գործոնը բուն իշխող դասակարգի հոգեբանական վիճակն է:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀՖՖ-Ն ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽԱՂ ԿԱՆՑԿԱՑՆԻ ՉԵՌՆՈԳՈՐԻԱՅԻ ՀԵՏ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը հունիսին ընկերական խաղ կունենա Չեռնոգորիայի հետ:

Այս մասին հայտնում է ՀՖՖ-ն: Հայաստանի ազգային հավաքականն ընկերական հանդիպում կանցկացնի Չեռնոգորիայի ընտրանու հետ:

Խաղը կկայանա հունիսի 9-ին՝ Չեռնոգորիայում:

Հանդիպման անցկացման կոնկրետ վայրը եւ ժամը հայտնի կդառնան ավելի ուշ:

ՇԱԽՄԱՏԻ ԿԱՆԱՆՑ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱ

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանը շարունակվում է Հայաստանի կանանց 80-րդ առաջնությունը:

Մրցաշարի 7-րդ տուրում հաղթանակ են տոնել Նվարդ Հայրապետյանը, Պոլինա Կոբակը եւ Մարիամ Ավետիսյանը: Միավորը կիսել են Գասպարյան-Գաբոյան, Դանիելյան-Հարությունյան զույգերը:

Այժմ Հայաստանի կանանց առաջնության առաջատարը 5,5 միավորով Սուսաննա Գաբոյանն է: 5 միավոր ունի Աննա Խաչատրյանը եւ 4,5՝ Մարիամ Ավետիսյանը:

Հայաստանի շախմատի կանանց առաջնությունը կավարտվի հունվարի 22-ին:

ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱ

Ֆուտբոլի եվրոպական Չեմպիոնների լիգայում հունվարի 21-22-ին (չխմբ.) տեղի կունենան 7-րդ տուրի հանդիպումները:

Չեմպիոնների լիգա, 7-րդ տուր

«Ատալանտա» - «Շտուրմ»՝ 21:45 (Երեւանի ժամանակ)

«Մոնակո» - «Աստոն Վիլա»՝ 21:45

«Աթլետիկո Մադրիդ» - «Բայեր»՝ 00:00 (հունվարի 22)

«Բենֆիկա» - «Բարսելոնա»՝ 00:00

«Բոլոնիա» - «Բորուսիա Դորտմունդ»՝ 00:00

«Բրյուգե» - «Յուվենտուս»՝ 00:00

«Ցրվենա Զվեզդա» - «ՊՍՎ Էյնդհովեն»՝ 00:00

«Լիվերպուլ» - «Լիլ»՝ 00:00

«Սլովան» - «Շտուտգարտ»՝ 00:00

Հունվարի 22

«ՌԲ Լայպցիգ» - «Սպորտինգ»՝ 21:45

«Շախտյոր Դոնեցկ» - «Բրեստ»՝ 21:45

«Միլան» - «Ժիրոնա»՝ 00:00 (հունվարի 23)

«Արսենալ» - «Դինամո Զագրեբ»՝ 00:00

«Սելտիկ» - «Յանգ Բոյզ»՝ 00:00

«Ֆեյենորդ» - «Բավարիա»՝ 00:00

ՊՍԺ - «Մանչեսթեր Սիթի»՝ 00:00

«Ռեալ Մադրիդ» - «Զալցբուրգ»՝ 00:00

«Սպարտա» - «Ինտեր»՝ 00:00

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ 106

Հունվարի 20-ին լրացավ ամենայն հայոց բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի 106-ամյակը: Բանաստեղծուհու տուն-թանգարանի նախաձեռնությամբ՝ նրա արվեստի երկրպագուներն օրն սկսեցին դանթեոն այցելությամբ, որտեղ մասնակից մտավորականները հանդես եկան խոսքով ու հուշապատումներով: Այնուհետեւ տուն-թանգարանում բացվեց «Ժանյակը՝ Կարեն Եփիփ վարժարանի հիշատակություն» ցուցահանդեսը: Հեղինակ՝ վարժարանի սանուհի Թագուհի Մելքոնյան:

«Կապուտիկյանը 14 տարեկանում հայտնի դարձավ Հայաստանում, իսկ 32-33 տարեկանից հռչակ ձեռք բերեց ամբողջ Սովետական Միությունում՝ ստանալով Պետական մրցանակ: Նրան այդ ժամանակվանից սկսեցին թարգմանել տարբեր լեզուներով. այդպիսով նրա անունը տարածում գտավ նաեւ միության սահմաններից դուրս»,- իր խոսքում նշեց Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի ղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու Արմենուհի Դեմիրճյանը՝ առանձնահատուկ շեշտելով, որ Կապուտիկյանը մեր ամենաթարգմանված հեղինակներից է:

Ներկայացված ցուցահանդեսի ժանյակներն օգտագործվել են հագուստի եւ կահկարասու ձեւավորման մեջ (օձիքներ, թեւքածալեր, փռոցներ, ծածկոցներ...): Ժանյակահյուսքը դեկորատիվ-կիրառական արվեստի եւ ժողովրդական գեղարվեստական մտքի լավագույն դրսեւորումներից մեկն է: Ինքը՝ Սիլվա Կապուտիկյանը, երիտասարդ տարիներին զբաղվել է ժանեկահյուսությամբ: Մի քանի գործ այժմ ներկայացված են տուն-թանգարանի ցուցափեղկում:

● *Հունվարի 26-ին՝ ժամը 19:00-ին, Երգի պետական թատրոնում կլինի մեծ պրեմիերա՝ «Կոմիտաս» երաժշտական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-5.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ավտոապահովագրողների բյուրոն ո՞ր դեպքում է հատուցում տուժած անձանց պատճառված վնասները:

Արամ Պետրոսյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ա. Պետրոսյանի հարցին ի պատասխան՝տեղեկացնում ենք, որ բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է տուժած անձանց պատճառված վնասները, եթե՝

- վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձն անհայտ է: Այս դեպքում Բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է միայն տուժած անձանց պատճառված անձնական վնասները:
- Վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր:
- Վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ:
- Վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ (սնանկ), եթե նա, օրենքի համաձայն, պարտավոր էր հատուցել պատճառված վնասը:

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ երաշխավորման ֆոնդը գոյանում է Բյուրոյի անդամների կողմից կատարվող միանվագ, պարբերական եւ լրացուցիչ վճարներից, օրենքով սահմանված այլ ձեւերով ներդրված միջոցներից, ինչպես նաեւ այն ակտիվներից, որոնցում ներդրվել են դրանք, եւ դրանց կառավարման արդյունքում ստացված եկամուտներից: Երաշխավորման ֆոնդի միջոցները սեփականության իրավունքով պատկանում են Բյուրոյին: Դրանք կարող են օգտագործվել բացառապես Երաշխավորման ֆոնդի համար օրենքով սահմանված նպատակներով եւ դեպքերում:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞վքեր կարող են օգտվել ուսման վարձի զեղչից նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում:

Լաուրա Ասլանյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ուսումնական հաստատությունը կարող է վճարովի հիմունքով սովորող ուսանողական համակազմի մինչեւ տասը տոկոսին, հաշվի առնելով ուսանողի սոցիալական վիճակը եւ բարձր առաջադիմության արդյունքները, իր միջոցների հաշվին մասնակի փոխհատուցել ուսման վճարը՝

1) սոցիալապես անապահով ուսանողներին,
2) միակողմանի ծնողազուրկ ուսանողներին,
3) 3 եւ ավելի անչափահաս կամ 3 եւ ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին,
4) վճարովի ուսուցման համակարգում երկու եւ ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին,
5) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներին,
6) հեռավոր լեռնային եւ սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա-ուսանողներին,
7) մինչեւ մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին,
8) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ ուսումնական հաստատության հայեցողությամբ:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետության կողմից կրթաթոշակ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ֆրանսիացի ճանապարհորդ եւ գրող Սիլվեն Տեսոնի հովանու ներքո Defis Humanitaires մարդասիրական կազմակերպությունը օրերս Հայաստան է բերել ֆրանկոֆոն ժամանակակից գրականություն՝2700 գիրք: Գրքերն ուսանողների համար են:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 -20 -2 + 2
Կոտայքի լեռներ	-10 -15 -2 + 2
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3
Գեղարքունիք	-8 - 11 -2 + 1
Լոռի	-4 - 8 +7 + 10
Տավուշ	0 -2 +3 + 6
Արագածոտնի լեռներ	-15 - 18 -2 + 2
Արագածոտնի նախալեռներ	-5 - 9 -2 + 2

Արարատ	0 - 5 +2 + 4
Արմավիր	-2 - 5 +2 + 4
Վայոց ձորի լեռներ	-6 - 9 +2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +2 + 5
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	0 + 3 + 7 + 10
ԼՂՀ	-2 - 6 + 8 + 10
Երեւան	-1 - 3 0 + 2

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.1.2025**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*